ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ

19.10.2022 № 1-7/635

Ձեր № _____

0033, ք.Երևան, Հր. Քոչար 5/2 Հեռ. Тел. Phone+(374.10) 225 355
0033, г.Ереван, ул. Гр.Кочара 5/2
Hr.Kochar 5/2, Yerevan, 0033
Fax: + (374.10) 260 806
E-mail: info@armarchive.am

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2022թ. հոկտեբերի 11-ի թիվ 350-67 հարցման, հայտնում ենք.

Հայաստանի ազգային արխիվի պաշտոնական կայքը վերաթողարկվել է 2022թ. հունվարի 25-ին: Թվայնացված է Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերի մոտ 2%-ը: Հայաստանի ազգային արխիվն ունի փաստաթղթերի կատալոգ, որը համացանցում դեռևս հասանելի չէ: Արխիվի կայքէջի վերաթողարկումը և թվայնացման սարքավորումների ձեռքբերումը կատարվել է 2021թ.՝ ՀՀ պետական բյուջեից հատուկ այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին: Փաստաթղթերի թվայնացման գործընթացը կրում է շարունակական բնույթ և իրականացվում է Հայաստանի ազգային արխիվի ֆինանսական միջոցներով:

2022թ.սեպտեմբեր ամսվա դրությամբ Հայաստանի ազգային արխիվում պահպանվում է 4.282.295 (չորս միլիոն երկու հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր իննսուհինգ) գործ:

Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերի գերակշիռ մասը թվայնացված չէ: Արխիվային հավաքածուն պարբերաբար համալրվում է նոր փաստաթղթերով: Ձեր կողմից պահանջվող, մինչև 1970թ. արխիվում առկա փաստաթղթերի քանակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, իրենից ներկայացնում է ամիսներ տևող ծավալուն աշխատանք: Ավելորդ ժամանակ և մարդկային ռեսուրսներ չվատնելու համար, խնդրում ենք առավել հստակեցնել Ձեզ հետաքրքրող փաստաթղթերի բնույթը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի ազգային արխիվում գործում է ընթերցասրահ, որտեղ կարող եք ուսումնասիրել ցանկացած փաստաթուղթ և ստանալ Ձեզ հետաքրքրող տեղեկատվությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ՍԵՐԳԵՅ ԱՍՐՈՒԽԱՆՅԱՆ**